ական ժողովրդեանս 'ի միջի սորա, եդ հիմունս սորա, այլ մեծագոյն.., Պր. Հրիհորն և տիկինն իւր Բանի Ազիզոյ իւրեանց սեպհական ընչիք, և արդեամբ և քրտնաջան վաստակաք... հրաշափառագոյն մեծացուցին և պայծառացուցին Ռ թուին Հայոց», 'ի 1551: Երեսուն տարի վերջը Պ. Միխնոյ գործունեայ երէցփոխանը, ընդ Կուլաֆ տիկնոջ և 'ի ձեռն այլ բարերարաց՝ շատ աշխատած է եկեղեցւոյս պայծառութեան մասին: Տաճարիս գանձատան մէջ տեսայ վայելչաձև սկիհ մի ՌԼ (1581) թուականով, որ Միխնոյի անունը վրան կը կրէր: ՌԾԲ թուին գրուած յիշատակարան մի այսպէս կը խօսի. «Աստուածային աւրհնութիւն և ողորմութիւն հանապազ եղիցի վրայ Պր. Միխնոյ երեսփոխանին... Սուրբ Նիկողայ եկեղեցւոյ վրայ զճակատն շինել ետուր ա փառաւոր երևելի և գեղեցկաշէն զչիդ. և 'ի վերայ ոսկեզօծ խաչ կանգնեց... դարձեալ Ս. Նիկողայ տաճարի վրայ կայր մի մեծ և բարձրադիտակ քումպէթ և առաւել ծանր էր, եկեղեցւոյ կամարի վրայ. զոր տեսեալ զայն Պր. Միխնոյ երէցփոխանն հրամայեաց իջուցանել զայն քումպէթն, և դարձեալ երրորդումն շինել ետուր՝ այլ փոքրագոյն և գեղեցիկ շինուածով. և բոլորովին պատուհան էր և կամարակապ արար. և վերևս ծածկեց սանով և նկարել ետ ոսկով և 'ի վրայ ոսկեզարդ խաչ կանգնեց...»: Շատ երկար կը լինէր եթէ արդիւնաչատ երէցփոխանին բոլոր աշխատութիւնքը յիշէինք:

1672 ին Մէհմէտ Դի. Կամենից առած ատեն՝ Հայոց շատ տներ նիւթ կամ ճարակ կրակի եղած են: Նոյն միջոց քանդուած է Հայոց Վերափոխման